

ՀԱՅ-ՀԱԲԵՇԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Վենետիկի մխիթարյանների «Բազմավէպ» ամսագրում 1847 թվականին (էջ 182 և շար.) տպված է մի հետաքրքիր բանաստեղծություն, որ Վենետիկ քաղաքի գովքն է հյուսում: Խմբագրությունն իր տված ծանոթագրության մեջ նշում է, որ բանաստեղծությունը գրվել է 1500—1600 թվականների միջև: Մեզ համար ուշագրավն այն է, որ բանաստեղծությունը գրողն ապրել է 16-րդ դարում և որ նա իրեն անվանում է Խաչատուր երեց Հարեշացի:

Պատմության կողմից արձանագրված առաջին պաշտոնական նվիրակը, որին Հայ եկեղեցին ուղարկել է Հարեշստան, եղել է Գրիգոր եպիսկոպոս՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից: Գրիգոր եպիսկոպոսը Հարեշստան և ապա Հնդկաստան է մեկնել 1652 թվականին: Նրա այդ նվիրակության մասին հաղորդում են Մեսրոպ Թաղիադյանը («Պատմութիւն Հին Հնդկաստանի» աշխատության 3-րդ գրքի 7-րդ գլուխում) և Աստվածատուր և պիտի ապա Հովհաննեսյանը («Պատմութիւն Երուսաղեմի», էջ 343): Երուսաղեմի պատմագիրը գրում է. «Գրիգոր եպիսկոպոս ուն շրջեալ քարոզութեամբ յաշխարհ Եթովպիտյ մինչ ի Մուխա եկն անգուստ ի Քողի (Գոա, Հնդկաստան) և քարոզութեամբ ի գովկ հաստատեաց զամեննեսեան ի դաւանութիւն հայոց և ասորց»:

Գրիգոր եպիսկոպոսից մի երկու տասնամյակ հետո Հարեշստան այցելություն է կատարել Հովհաննես արքեպիսկոպոս Աղթամարցին (Բութումչին), որը թողել է իր ժլատ ուղեգրությունը: Կարապետ եպիսկոպոսի հայտնարերած այդ ուղեգրությունն ակադեմիկոսներ թ. Տուրակը և ն. Մաոր ծանոթագրություններով լույս են ընծայել «Հրատանական Վետհե» ամսագրում (1914 թ., էջ 6—

* Եարունակված «Էշմիածին» ամսագրի 1956 թվականի N 4 IV-V-ից, VI-ից և VII-X-ից:

10): Նույն ուղեգրության մասին հետաքրքիր ուսումնասիրություն է գրել արևմտահայ Հայտնի բանասեր Ա. Ալպոյաճյանը («Առաքելություն ի Հապէշստան Ժէ գարուն», Կամբիս, 1946 թ.):

Երկու գար հետո 1867—1868 թվականներին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության խնդրանքով Հարեշստան է մեկնել հայկական եկեղեցական հատուկ պատվիրակություն (Խահակ արքեպիսկոպոս Բարերգցի, Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիշյան և Եղեկիել սարկավագ)* անգլիացիների հետ գտնված թեոգորոս երկրորդ ներուանեկեցտիի հետ բանակցելու և անգլիացի կալանավորներին ազատելու նպատակով: Հայ եկեղեցական պատվիրակության այս ուղեղորությունն իր ժամանակի կարևոր իրադարձություններից մեկն է եղել: Պատվիրակության անդամ Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիշյանը (պոլսեցի) գրի է առել իր Հուշերը՝ «Երկամեայ պանդիստութիւն ի Հապէշստան» խորագույն երկու հատորի մեջ (Երուսաղեմ, 1871 թ.), որ թարգմանել է նաև անգլերենի, ֆրանսերենի և ապա գիրմաներենի և աշբի ընկնող տեղ է դրավում Հարեշապիտության մեջ:

Մեր զարի սկզբին Աղդիս-Արերա է ուղարկվել որպես նթովպիտ հայոց հոգիվ Տ. Մկրտիչ քահանա Զլդատյանը, որի Աղդիս-Արերա ժամանումը մանրամասն նկարագրվել է ժամանակի հայ մամուկում, մասնավորապես «Արարատ» ամսագրում (1905 թ., էջ 532, 619, 819):

Աղդիս-Արերայի նորակառուց հայ եկեղեցին օծելու համար 1928 թվականին Հարեշստան է ուղեցրվել Կոստանդնուպոլիսի Պատրիարքական տեղապահ: Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը, որն իր ուղեղորությունը գրի է առել և հրատարակել (Ուղեղորութիւն յԵթովպիտիա», Կոստանդնուպոլիս, 1930):

Փ Փ Փ

Թուական Հարեշապիտության գրմագիր պրոֆ. Վ. Վ. Բոլոտովն զբաղվել է նաև Հայ-Հարեշական հեղեցական Հարարերությունների հարցով և առանձին ուշագրավ տեղեկություններ է հազորությ մեջ այդ հարցի վերաբերյալ նրա աշակերտ Հարեշական ակադեմիկոս Բ. Տուրակը մտադրել էր Հատուկ աշխատություն գրել Հայ-Հարեշական Հարարերությունների մասին, և իր այդ նպատակն իրագործելու համար 1910 թվականին նա ժամանում է Էջմիածին, որտեղ ուսումնասիրությ է Մատենադարանի Հարեշերին ձեռագրերը: Պիտոքրորդ վերագրածին ակադեմիկոս Տուրակը Արևելագիտական ընկերությունում Հատուկ զեկուցությ է կարդում Հայ-Հարեշական հեղեցական Հարարերությունների մասին: Նրա այդ զեկուցությ 1912 թվականին լույս է տեսել ուսերին հետեւյալ վերնագրով. «Հայ-Հարեշական Հարարերություններից: Փաստեր: Էջմիածնի Մատենադարանի Աթովակերեն պատասխներու Ազգությունը և Աթովակերեն ձեռագրերում Ս. Գրիգոր Լուսավորչին վերագրված Հարաստություններ»:

Ակադեմիկոս Տուրակի 17 էջանոց այս փառածավալ աշխատության մեջ կարգում ենք.

«Հարեշական նեղեցու վրա Հայ նեղեցու ազգեցությունը մենք կարող ենք նկատել մեկ արձանագրված փաստից:

Հերնա Դենդիկի թափակորության շրջանի համառոտ ժամանակագրության մեջ 1539 թվականի մասին կարդում ենք. «Այդ ժամանակ Հատուկի հարցում ակնվաճ Հալածանքների հետևանքով ապահանություն ծայր առավ և թուվական ժաղավրդի մեջ: Ունաք առում էին, թե Զատարիկը պեսք է տոնիի միացայի 18-ին (ապրիլի 13-ին), իսկ նրանք, որոնք դիտեին տերունական կարգը, Հավատի գործում համաձայն էին թագավորի հետ և հրեական Պատիկը տոնեցին միացայի 10-ին, իսկ բրիտաններին Զատիկը՝ 11-ին (ապրիլի 6-ին):»

Պրոֆ. Վ. Վ. Բոլոտովն ապացուցել է, որ ավել գեպրում խոսր վերաբերում է Հայ-Հական Հայտնի Շուադատիկին, որը նշված տարին իրոք ընկնում էր ասպրիլի 6-ին և ըստ Դյուլորիկի, և թուվացիները նրանադիմում իրոք որ Պատերը կատարում էին Հայերի հետ նպատառում և Հարեշատանում Զատիկը միշտ էլ տոնում էին ուղղափառների հետ և հիշյալ զեպրը, թվում է, միակն է, իր գտնվել են Հայկական սովորություններու կողմանակիցներ, սովորույթ, որն առաջ ընդհանուր միարնակյան էր Հարեշատանի աստվածաբանական դրականության մեջ նույն-

ուհա կան օդակներ, որոնք նրան կապում են Հայաստանի հետ: Բայց զրանք արգելն վերաբերում են միշնորդ թարգմանություններին և, Համենայն զեպս, զեւան ստուգման կարիք ունեն Գրանց թվում կարելի է զասել այ ճառատարական սեպան կարգությունը կամուս թրիառությ աստվածության մասին ընդդմ ընդից որ վերագրվում է Ս. Գրիգոր Լուսավորչին և մտնում է միովակական «Մինուդյուն» կանոնագրքում: բ) Հատվածներ Ս. Գրիգորի Հարաստություններից, որ մտել են «Հայրերի Հավատառ գավանաբանական ժամանակությունը մեջ, զ) Ս. Գրիգորին վերագրված Հարաստությունը, որ զեւազիկ է Մինարաններից, որ մտել են «Հայրերի Հավատառ գավանաբանական ժամանակությունը մեջ, զ) Ս. Գրիգորին վերագրված Հարաստության հետ, զ) Հատվածներ «Հայատանի արքայական ժամանակությունը մեջ: Ա. Գրիգորին վերագրված Հարաստությունը, որ զեւազիկ է Մինարաններից մեռագրերի վերջում՝ Ծննդյան տոնին և ի օրերը կատարելու համար, սա նին և սպառնակում է շատ նին մասեր, որոնք նրան մերձեցնում են առարելական որոշումների հարաստության հետ, զ) Հատվածներ «Հայատանի արքայական զրոյակուպոս եվիրաբախուսիսի գավանաբանական դրոյթյուններից, որոնք նրանք զեւակած են մինուցն «Հայրերի Հավատառ միարնակյան գավանաբանական ժամանակությունը մեջ: Այս ամենը վերաբերում է Յարգմանական դրականությանը, մեծ մասմբ արքարելներից, որ կատարված է ոչ շուրջ քան 16-րդ դարի վերջերը: Ավելի վաղ շրջանին է վերաբերում եթովակական Մինարանը թարգմանությունը, որի մեջ Ս. Գրիգորը և նրա շարքը աշքի ընկնող տեղ են զրագում: Մասկարամի 19-ին (սեպտեմբերի 16-ին) նշված է Ս. Գրիգորի Հիշատակի կատարումը, ինչպես նաև 29-ին և 30-ին նշված է Հիշատակի կատարումը կին նահատակներ Արսեմիայի և Ազաֆիայի, որոնք համապատասխանում են Ս. Հոփիսիմեին ու Ս. Գայանեին: Բացի զրանից, Ս. Գրիգոր Լուսավորչը, մարտիրոս առանց արյան հեղմանը, նշված է տախսասի 15-ին (զեկումբերի 11-ին), ինչպես մենք այդ գանում ենք զատինների ժողո... Բացի զրանից, և թուվական դրականության մեջ կա Ս. Գրիգորի ավելի ընդդրակ վարքը, որ զեւազիված է «Մարտիրոսների սիրապարծությունները» ժողովածուի մեջ, որը պրի է առնվել 14-րդ դարի վերջերին կամ թի 15-րդ դարի սկզբին. զրա ազգուրը Աղաթանգեղոսի արքական թարգմանությունն է, սակայն շարադրանը շատ ավելի սեղմ է: Եթե Հավատանք Բրյուսասին, և թուվական դրականությունն իր գործիչների մեջ ունեցել է Հայ արքա Գևորգին, որը մոտավորապես 1440 թվականին Վկույափ օրնությունը խորագուվ փառարանություն է զբել ի պատիվ Տիրամոր: Դա ամենասիրված և ամենատարածված օրներգություններից մեկն է, որն, ըստ որում, աշքի է ընկնում ոճի մաքրությամբ, մի բան, որ կարող է շկապվել Հեղինակի օտար ծագման հետ...: Բայց Զոտամ-

թերը կարծիք է հայտնում, որ այդ Գևորգը նույն այն թարգմանիչն է, որ Սվետարանի շարարանաց զլուխների վերաբերյալ հայ Պետրոս Սաղմանթիի մենությունները թարգմանել է եթովպերենի:

Երբ Պետերովով կրթմատն ստանում է պուլսի օրհներգությունը՝ երկի եթովպերեն ձեռագիրը, ակացինմիկոս Տուրակը, նկարագրելով այդ ձեռագիրը, գալիս է այն եղբակացովիյան, որ արքա Գևորգը հայ էր:

Հարեց ուստագործների մինչև էջմիածին համեմու անժխտելի ապացույցը հարեշերեն ձեռագրերի առկայությունն է էջմիածինի նախկին ձեռագրատանը, իսկ այժմ՝ Հայկական ՍՍՌ նրանի Պետական մատենագրարանում։ Տարակույս լինել չի կարող, որ այդ հարեշերեն ձեռագրերը բերել են հարեց ուստագործները։ Մեր պատմագրության մեջ վկայություն է պահպանվել այն մասին, որ 15-րդ դարի առաջին քառորդում Հայաստան եկած հարեց երկու քահանաներ վերադարձին զուվել են Խիզանում։ Ստոնքանոս վարդապետի վկայաբանության մեջ հարեց երկու քահանաների նահատակության մասին կարդում ենք. «Երբ առաջնորդությամբ Սուրբ Հոգոյն և սիրով Որգույն Միածնի և նախախնամությամբ Զօրն նրկնաւորի ելեալ յաշխարհէն էրեանց և եկին ի սուրբ քաջարն երսաւդէմ և կատարեցին զուխտա իւրեանց և հասեալ երկիրս Հայոց շրջէին ի վանորայս և յիտոյ եկեալ ի քաջարն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեցաց։ Զոր եկեալ յիտոյնէիցն բարձին զմարձին երկուց սուրբ քահանայիցն հարաց մարտիրոսացն և տարեալ ամփոփեցին ի վանքն Բարեհորի Պշ (1421) թուականին հայոց»¹⁹:

Սակայն գավանակցության հիման վրա հաստատված եկեղեցական հարաբերությունները, փոխադարձ այցելությունները հոգ են նախապատրաստել նաև կազմակերպչական հարաբերություններ հաստատելու համար երկու եկեղեցիների միջև։

Հայ-Հարեշական եկեղեցական կազմակերպական առնչությունների մասին առաջին վկայությունը թողել է Հ. Զեռնդ Ալիշանը.

«...Երովնական ի սմա հշանաւոր է ի յետին դարս եկեղեցական յարնշուրին հայոց, փոխանակ հազարապետաց գրան եղիպատացոց վերատեսութ եկեղեցեաց ընծայելով երվուրցոց»²⁰:

Դժվար է որոշակի բան հասկանալ այս ժամանակից։ Ալիշանը իր հիշատակած հատաքարի փաստերի աղբյուրները մատա-

ցուց անելու սովորությունը չունի։ Ակագեմիկոս Բ. Տուրակի հիշատակած զեկուցման մեջ կա այսպիսի մի հետաքրքիր տեղեկություն, որը կարող է որոշ լույս սփռել Ալիշանի հաղորդական վրա.

«17-րդ դարի վերջերին, Հովհաննես թաղավորի օրով (1667—1682 թ. թ. թ. 2. թ.), երբ «Թրանկները» վերջնականապես վտարվել էին եթովպահայից, այնտեղ մենք տեսնում ենք նույնիսկ հայ էպիսկոպոս, որն ապրում էր այնուն ավելի քան մեկ տարի և վայելում թագավորի սերը։ Այդ եպիսկոպոսը հետագայում Փարիզում իր մի բարեկամ հայ վաճառականի հաղորդել էր, որ նեղուաթիական Պատրիարքարանի ուղարկած բահանայապետների աղիտությունից և կոպությունից զգուն, արամագիր էր բանակցություններ սկսել հայերից առաջնորդ ստանալու համար։ Այդ պատճառով էլ Հովհելությանույն սկզբում է խեթ նախել հայ եպիսկոպոսին և նրան կասկածել բարձր նվիրացնուական ուննագություններ կատարելու մեջ։ Այդ եպիսկոպոսն էլ հաղորդել էր, որ «Հարեշական թագավորի մոտ ժառայում էր մի հայ աեխմիկոս», որը աեղացիներին վառող պատրաստել էր սովորեցնում։ Հարգելի ակազեմիկոսն էլ սակայն մատնացույց չի անում այս ինիստ արքերավոր տեղեկության աղբյուրով։ Պետք է նկատել, որ երբ ակագեմիկոսն Բ. Տուրակը դրում էր այս տողերը, զեան կարապետ և պահկոպոս չեր գուել Հովհաննես արքակիոպոսի ուղեկությունը, որի հատաքարի վերջանը նա մատնակցում է երկու տարի հետո։ Ամենայն հավանականությունը մեր նեղությունը մեջ է երկու առաջնորդ համար, նեղուածնեղեցտի Հովհաննեսի մատնությունների վեցությունը հայ հովհորականը Հովհաննես արքակիոպոս Աղթամարցին է, որովհետեւ ողի ոչ կարացի կեալ վասն վշտացուցանելոյ զմենդ քահանային յազգագուհացությունից օրինաց մերոց և հաւատոյ համար, — զանդաւալում է Հովհաննես արքակիոպոսն իր համաստ ուղեկության մեջ։ Նմանօրինակ պատկեր, իրադրություն մենք տեսնում ենք։ 19-րդ դարում, երբ հայկական եկեղեցական պատրիարքակություն արցի էր գնացել Հարեշաւան։

«Երսեին թե, — հաղորդում է Սամիրիշչանը, — նույն տարին վերաշնորհ Խասհակ սրբագանը և նվաստան Ծամր-Ամպա եկած ժամանակին լուր մը տարածվեցավ, թե Թեղուդուրութ խապակը խապի տուշնորդեն և անոնց աղքեն ծանձրացած ըլլարով, դրությունը խնդրած ըլլա սուրբ երուսակմի հայոց պատրիարքեն, որ հախիսկոպոս տուշնորդ մը իրեն խրիե, որպիս զի խապակոց անոնը ընօթի Հապեշխստնեն։ Եվ արդարեալ այս լուրը Ապունա Սելամին (այսինքն Պատի

19. 2. Մահանգան և 2. Աճառյան, «Հայոց նոր վեաները», էջ 244։

20. 2. Դ. Ալիշան, «Ալիշան», էջ 471։

Եկեղեցու կողմից ուղարկված հարեցական
կրոնապետը) ալ լսելով յուր բանափին մեջ, և
արգեն հուսահատությունը մեկ կողմէն և
գաղղիական ախտը մյուս կողմնն յուր անձը
մաշած ըլլալով, ավելի ցավ մը կըլլա, կըսին,
իրեն մեր հոն երթալը²¹ (բնդդումն իմն է—
Հ. Թ.):

Տիմոթեոս ծալքագույն վարպատկությունը, որպես հայ եկեղեցական պատվիրակության երկրորդ անդամ, Հարեւատան այցելել է 1867—1868 թվականներին, երբ հարեւ տաղանգավոր նեղուս-նեղեշտի թեոդորոս երկրորդը անզիփական արշավանքի ժամանակ գրեթե մենակ մնացած, ճարահատյալ ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին: Թեոդորոսի այս ողբերգության մեջ խիստ բացասական դեր խաղաց ո՛չ միայն զպտի արունա Անդրեասին, այլև զպտիների պատրիարքը, որն Ալեքսանդրիայից ծպտրատ ժամանել էր Հարեւատանի սահմանապուխը և ցանկանում էր իր հեղինակությամբ Թեոդորոսին ծնկի բերել անզիփացիների առաջ:

Հարեցները չեին կարող զո՞ւ լինել Պատի
Եկեղեցու գերիշխանությունից:

Նաև պայմաններում, երբ օրակարգում
դրված էր նաև միասնական Հարեւտան
ստեղծելու հարցը, անհրաժեշտ էր գտնել
գոնեն շնորհ մի արունակ

Հայկական եկեղեցական պատվիրակությունը անդիմացի գերյալներին ազատներու նպատակով Հարեցստան ժամանեց Հարեցստանի համար սպատմականորեն հույժ կարելոր, բայց խառն ժամանակաշրջանում (1867—1868 թ. թ.), եթե ազգահավաքման և միասնական Հարեցստան ստեղծելու հետ միաժամանակ դրված էր թի' նոր նեղուս-նեղշտիք գահ բարձրանալու և թի' նոր արունա ընտրելու հարցը: Վախճանվի էր զատիք արունա Սելամին, իսկ զպահ արունաների գեմը ընդհանուր գդառնությունն էր առաջացել:

«ժամանակ ժամանակ,— զրում է Տիմո-
թեոս ծայրագույն վարդապետ Սափրիցանը,
— թէ՛ Ռաս-Ալիին և թէ՛ Թէկրիի Ուահե իշ-
խանին զրով մեր Սրբազն Պատրիարքին
զրություններ և մարդիկներ գալով առաջնորդ
խնդրած են, բայց անոնց խնդրքը զանց
առնված են թէ՛ ճանապարհի վտանգ-
ներուն և թէ՛ այս երկրիս միշտ խռո-
վության և պատերազմի մեջ ըլլալուն պատ-
ճառով։ Այժմու Թեոդորոս թագավորն ալ-
ասկի 15 տարի առաջ առաջնորդ եպիսկոպոս
մը խնդրեց մեր Սրբազն Պատրիարքին,
բայց նա պատասխանեց, թէ Հապեցու եր-

21. *Տիմոթեոս ծ. վրդ. Սափրիլան, «Երկամկայ պահ-դրսութիւն ի Հապէջիսան», Երաւագեմ, 1871 թ., Տասը թ. էջ. 118.*

կրին առաջնորդական իրավասությունը խպատվոց կաթողիկոսին կվերաբերի. մենք չենք ուղեր անոր այս իրավունքը հափշտակել, անիկա խեղճ է, թող անոր հատուցանին 10.000 թավեր իրավունքը և առաջնորդ եք խեղճին՝ իմի Արքանա Սկրամին մեռած է»²²:

Հայութեական հարաբերություններ են Հաստատված Հայկական հեղեղական պատվիրակության երկու անդամների և ապագա նեղուա-նեղեցտինների՝ Դեշտացաց Քասասայի (Հովհաննես Չորրորդ, 1868—1899) և Շուայի երիտասարդ իշխան Մենելիքի միջի (1889—1913 թ. թ.), որոնց ևս տալիս են նույն մերժուական պատասխանը։ Հայ կրոնավորները մտերմական խորհուրդներ են տալիս ապագա Դեշտացաց Քասասային, որն ակնածությամբ լսում է նրանց, «զլուխը ծռած և աշքերը դեպի գետին զարձուցած» խորին ուշադրությամբ։ Այս ավելացնում է, «Տված խորհուրդներնիդ ընդունեցի սրտանց... Աստված ինչ որ կամեցեր է ինձի համար, Համելի է ինձի, և ինչ ձեր սուրբ աղոթից օժանդակությամբը թագավորական իշխանություն տալու ըլլա ինձի Աստված, զիտցած եղեք, որ արքայական թագը ձեղմէ պիտի ընդունիմ»²³։

Բայց Հայ Եկեղեցին չի ունեցել երեք գերադանական փառասիրություններ զավանակից բույր Եկեղեցիների՝ Հարեշական, Ղրպտական, Ասորական Եկեղեցիների նկատմամբ և չի միջամտել նրանց ներքին գործերին։ Հայ Եկեղեցին բավարարվել է միայն իր բարոյական գերադասության ճանաչմամբ։ Երա այս բարոյական գերադասությունը վառ կերպով երևան եկավ նաև այն միացյալ ժողովում, որին հայ կրօնավորները մասնակցեցին Ալեքսանդրիայից ուղարկված նորրնտիր զպտի արումնայի հետ։ Տիշչական դիմումը և ժողովը տեղի ունեցավ նույն 1868 թվականին, Ասմարա քաղաքում։ Ահա թե ինչ է հաղորդում Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյանն այդ հանդիպման եժողովի մասին։

«...Սիրով և ողջագործմամբ ընդունեցինք զինքը (նոր արուային)..., մասնավոր խռոսակցության մեջ պետք եղած տեղեկությունները հաջորդեցինք իրեն։ Գովությամբ պատմեցինք Տաճաշմաշ-Թասսայի կրօնասիրությունը, ըրիստոնիական բարի զղացմունքները, ընտիր Նեկեցեցականները պատվելը...»

«Հետ այսորիկ ժողովը կազմեցավ, ուր ներկա գտնվեցան ապօնային հետ եղող հրավիրակ հապեց կարգավորները և ուրիշ հառավորները՝ քառասունին առ անձնենք ժող-

22. *Unguiculatus*, *Cuvier*, *Il.*, p. 55.

23. Նոյին աեղում, էջ 144—145.

Դովույն մեջ առարկություն եղավ մեր կողմեն քահանացից տպիտությունը, որոնք առանց օրինավոր ձեռնադրության հինգ հարյուրը մեկն քահանա կկոչվին, առանց նայելու անոնց վարքն ու բարքը, զիտությունն ու արժանավորությունը: Խոստովանեցավ ապունան ալ ասոր ապօրինավորությունը և հայտնեց, որ այսուհետև շպիտի ընդունի ինքը ձեռք դնել մեկուն վրա՝ առանց ընդունելու կանխավ ժողովրդյան հաճությունն ու վկայությունը: Գարծյալ առարկեցինք Սուրբ Եկեղեցին յոթը խորհրդոց խափանումն ու անոնց վեղդումները, պատմելով ժողովույն մեջ ինչ որ աշոք տեսեր և ականջոք լսեր էինք: Զարմացավ ապունան և դժվարությամբ հավատաց մեր ըսածներուն, ու հարցուց ժողովականներուն, թե ստո՞ւգ ին այս զեղծումները՝ թե ոչ: Զերցին ուրանալ անոնք, բայց զիրենք ալ անմեղազիր ընելու համար, նախորդ առաջնորդներուն վրա դրին բոլոր հանցանքը. «Անոնք, ըսին, իրենց հոգեոր պաշտոնին մեջ թույլ գտնված են. ժողովուրդին չեն սորվեցուցած. մենք անոնց լեզուն չենք դիտեր, անոնք ալ մեր լեզվին ծանոթ ալլալով՝ անմիշական խոսակցությունները դժվարացած են, և հետզհետև սկսած է զեղծումները եկեղեցվո մեջ, և անկե ժողովրդոց բարուց ու վարուց ալ ածանցած է: Մանավանդ թե հավելցուցին, մեկ առաջնորդ մը Հապեշտանի բոլոր երկրին ի՞նչ օգուտ կրնարնել, և ի՞նչ կարգ կանոն կրնա մտցնել ու սորվեցնել:— Այս պատասխանները թերես իրավացի ըլլալով՝ ապունան ձայն հանեց. բայց երբ լսեց անիկա, որ եկեղեցյաց մեջ կանթեղ մը և լուս չի վառիր, ալ չկրնալով համբերել՝ դարձավ ըսավ. «Ասոր ի՞նչ ունիք փրուցելիք. միթե ատոնց ալ պատճառ առաջնորդներն են: Հետո մեղմացնելով յուր ձայնը՝ դարձավ մեզի ու բոլոր ժողովականներուն ըսավ. «Աստուծով այս գայթակելի կանոնազանցությունները և զեղծումները կշիտկվին. երբ տեղերնիւ հասնելու ըլլանք, ընդհանուր ժողով մը կկազմենք և հետզհետև բարեկարգություններ կհաստատենք»²⁴:

24. Տիմոթեոս ծ. վրդ. Սափրիւման, «Երկամեայ պանդխառութիւն ի Հապեշտանե», Հատ. Բ., էջ 148—149:

Անգլիացիների տված հրազենով և անգլիական զորքով նեգուս-նեգեշտի դարձած Քասսան (Հովհաննես Չորրորդը — 1868—1889 թ. թ.) անգլիացիների համար էլ զուգեց Սուրբանի մանեղականների դեմ մղած պատերազմում: Նրա մահից հետո նեգուսնեգեշտի տիտղոսին տիրացավ Շուայի իշխան Մենելիքը՝ Մենելիք Երկրորդ անունով: Մենելիքը Հարեւաստանի պատմության նշանավոր միապետներից մեկն է: Նա իրեն ըրչապատել էր նաև խորհրդական հայերով, որոնց նվիրվածությանը վստահ էր: Մեծ բարեկամությամբ նա կապված էր սերբաստացի Պողոս Մարգարյանին, որը հավասարապես մասնակից էր նզել Մենելիքի թե՛ պատանեկան տարիների փորձություններին և թե՛ շափահասության շրջանի փառքին ու պատմին մասնակից եղավ: Պողոս Մարգարյանը խրանուաց Աղքիս-Երեքա կառուցելու միտքը և մասնակցեց նոր մայրաքաղաքի վայրի ընտրմանն ու կառուցմանը: Մենելիքի աշակեցը ուղարկան գործում՝ հանդիսացավ աբարկիցի Մարգիս Թերզյանը, որն անձնուցացությամբ ծառայեց Մենելիքին բարձրացնելու գործին: Աղուայի հայտնի ճակատամարտում (1896 թվականի փետրվարի 29) հարեցների տարած փառավոր հաղթանակի մեջ իր մեծ բաժինն ունի Մարգիս Թերզյանը, որը կարողացել էր, օգտագործելով ֆրանսիստական հակամարտությունը, ֆրանսիական զենքով նախապես զինել հարեշական բանակը: Արտասահմանյան մամուկն անզամ իր ժամանակին նշել էր Մարգիս Թերզյանի ծառայությունները հարեշական բանակը զինելու գործում, Թերզյանին անվանելով «Հարեշական Բիսմարկը»:

Մենելիք Երկրորդի օրով նորից հարուցվում է Հայ-Հարեշական եկեղեցական հարաբերություններին կազմակերպական ուղղություն տալու հարցու Մենելիքի գայթաժառանգ Բաս Մաքոնենը, Աղուայի հերոսներից մեկը, Ֆրանսիա կատարած այցելության ժամանակ Մարսելում արևմտահայ հայտնի հասարակական գործիչ Միհան Չերազին ասում է.

«Եթովպական եկեղեցին և Հայ եկեղեցին բույրեր են: Հայերը մեր բարեկամներն են»²⁵:

25. «Բագմավէպ», 1905 թ., էջ 462:

